



ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ*



ի դասախոսությամբ ներկայացնել հայագետների ողջ աշխատանքը Մայր Հայրենիքում, թվարկել թեկուզ այն հիմնական հաջողությունները, որ մենք ունենք հայագիտության տարրեր ասպարեզներում անկարելի է, ուստի և ես պիտի կանգ առնեմ հայագիտության ասպարեզում՝ մեր ունեցած ակնրախ հաջողությունների, մեր հայտնի դիտնականների ու նրանց կատարած կարևոր ուսումնասիրությունների վրա:

Իմ ներկա դասախոսության մեջ ես ուզում եմ ծանրանալ հայագիտական այն աշխատանքների վրա, որ կատարված են մեզ մոտ հատկապես վերջին շրջանում, որովհետեւ տարիներ առաջ նաև մի դասախոսությամբ ես հանդիս եմ եկել թեյրութի սրահներից մեկում, և դուք մեր նախորդ աշխատանքների հետ մասամբ ծանոթ եք. իմ ներկա դասախոսությունը կդամանա յուրատեսակ շարունակությունը իմ առաջին զեկուցման. ես կանգ չեմ առնի այն փաստերի վրա, որոնք արդեն ձեղ ծանոթ են:

Հասկանալի է, որ մեր աշխատանքը հայագիտության ասպարեզում՝ ամբողջովին հիմնը ված է մեր անցյալի մատենագրական հարուստ ժառանգության վրա, այն ժառանգության, որ ստեղծագործել են մեր գրասեր պապերը և փայփայանքով պահել ու հասցը են. Մասենագրական այդ ժառանգությունը՝ մեր ուսումնասիրությունների փաստական նյութի ոսկյա շտեմարանն է եղել և է այժմ,

* Պրօֆ. Ա. Գ. Աբրահամյանի ներկա աշխատությունը Անթիւսասում նրա կարգացած դասախոսությունների շարքից առաջինի սղագրությունն է. արված են խմբակական փոքրիկ միջամտությունների. — ԽՄԲ. 1.

Հայագետների մեր նոր սերունդը երախտագիտական խորը հարգանքով է վերաբերվում դեպի ականավոր այն հայագիտաները, որոնք հայագիտական մեր նոր դպրոցի հիմնադիրները հանդիսացան հայրենի երկրում: Ես նկատի ունիմ ակագիմիկունիքը Հակոբ Մանավյանին, Հրաչյա Աճապյանին, Ստեփանոս Մալիասյանցին, Մանուկ Աբեղյանին, Աղասին Տերտիկյանին և մեր մյուս անվանի հայագետներին: Նշված գիտնականները ո՛չ միայն հարստացրին հայագիտությունը նոր ստեղծագործություններով, այն կարողացան, ժամանակի ընթացքում, ստեղծել ընտիր մերունդ, պատրաստված սերունդ՝ շարունակելու իրենց սկսած շնորհակալ գործը:

Բնական է, մենք հարգանքով ենք վերաբերվում և գնահատում այն աշխատանքը, որ կատարվում է նաև ձեզ մոտ՝ արտասահմանում, Ալավես, մենք չենք կարող չնշել այն աշխատանքը, որ կատարել է այստեղ երանաշնորհ Գարեգին Կաթողիկոսը՝ Պոռշյանների և հայ մանրանկարչության պատմության ուսումնասիրության ասպարեզում, գիտական այն խոշոր մուծունները, որ կատարել են նիկոլայ Ալոյնցը հայագիտության ասպարեզում, հանգուցյալ Արշակ Զոպանյանի կատարած աշխատանքը մեր ձեռագրերի, հատկապես տաղերի հավաքման և ուսումնասիրության գործում, օրինադ. Ս. Տեր-Ներսիսյանի և Ա. Երեմյանի ուսումնասիրությունները՝ մանրանկարչության պատմության, պարոն Ա. Աղապյանցյանի աշխատանքը՝ Հայստանի պատմական աշխարհագրության, պարոն Շ. Պերպերյանի ուսումնասիրությունները հայ արվեստի պատմության ասպարեզ-

ներում, Հայր Նիքոս Ակինյանի, պարոն Գառնիկ Գրողալյանի, վերապատվելի Եղիա Քասունու, Հայր Ոսկյանի, Հայր Մարլյանի, պարոն Սիմոն Սիմոնյանի և մյուս հայագետների աշխատությունները, որոնց մի մասի հետ ես այստեղ եմ հնարավորություն ունեցել ծանոթանալու Սակայն մենք արտասահմանի հայագետներից շատ մեծ աշխատանք սպասել չենք կարող, քանի որ գիտենք, թե նրանք զրկված են պետական հովանավորությունից, նյութական և բարոյական ինչպիսի ծանր պայմաններում են աշխատում, և նրանց ուսումնամիրությունների հրատարակությունը ինչպիսի դժվարությունների հետ է կապված:

Որպեսզի դուք կարողանաք պարզ պատճեռացուած կազմել Սովետական Հայաստանում կատարվող մեր հայագիտական աշխատանքների մասին, նախքան դասախոսության բուն նյութին անցնելը, ես ցանկանում եմ փոքրինչ կանգ առնել հայրենի երկրի գիտական այն օչախների վրա, որոնք կոչված են հայագիտական պատվարեր աշխատանքներ կատարելու:

Հայագիտության գլխավոր կենտրոններից մեկը հանդիսանում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան, կամ ինչպես դուք այստեղ ասում եք՝ Գիտությանց կաճառը: Գիտական այդ հաստատությունը ղեկավարուած է Ակադեմիայի պրեզիդենտ աշխարհահռչակական ակադեմիայուն: Վիկտոր Համբարձումյանը՝ մասնագիտությամբ աստրոֆիզիկոս: Այս այս գիտականն է, որ վերջին ժամանակներս հրավիրված էր լուսուն՝ արտեղի համալսարաններում դասախոսություններ կարդալու Ակադ. Համբարձումյանը ունի իր օգնականները, որոնք կոչվուած են վիցե-պրեզիդենտներ (փոխ-նախագահներ): ամեն մեկը գիտության մի ասպարեզի համար: Նրանցից մեկը ղեկավարուած է ճշգրիտ գիտությունների խմբի գիտական աշխատանքները, երկրորդը՝ բուարանության և հարակից մյուս գիտությունների խմբի աշխատությունները և երրորդը՝ հումանիտար գիտությունների ասպարեզը: Հումանիտար գիտությունների խորհը ղեկավարուած է պրոֆ. Մկրտիչ Ներսիսյանը:

Ակադեմիան, հումանիտար գիտությունների գծով, ունի երեք ինսահիտուա՝ Պատմության, Լեզվի, և Գրականության, իսկ ամեն ինստիտուտ ունի իրեն ենթակա փոքր խօժերը, որոնք մեզ մոտ կոչվուած են սեկտորներ (բաժանմունքներ), օրինակ՝ Պատմության ինստիտուտն իր մեջ ընդգրկուած է հնագիտության, հայ ժողովրդի պատմության հին և միջին շրջանների, հայ ժողովրդի պատմության նոր ու նորագույն շրջանների և Հայրենական պատերազմի պատմության սեկտորները: Ակադեմիայի նախագահությանն են

ենթարկվուած տնտեսագիտության, արվեստի պատմության և գիտառության բաժինները, որտեղ ուսումնասիրովուած են արվեստի, գիտառության և տնտեսագիտության մարդ զարգացումը: Հայաստանում:

Հայագիտական երկրորդ օջախը հանդիսանում է Հայկական ՍՍՌ Երևանի Գիտական համալսարանը, որտեղ աշխատուած եմ և են: Հայագիտական աշխատանքներն այսուղի կենտրոնացված են գիտավորապես Հայ ժողովրդի պատմության, Հայոց լեզվի և Հայոց գրավանության և այլ բաժիններում, որոնք մեզ մոտ կոչվուած են ամբողջության մեջ ու բաժիններու:

Գիտական գգալի աշխատանք է կատարում նաև Հայաստանի Պետական մատենադարանը, որտեղ աշխատուած են աղբյուրագետ գիտական աշխատապետներ, այն մասնագիտները, որոնք ուսումնամիրուած են մեր հայկական ձեռագրերը և գալերագրերը:

Վերջապես, հայագիտական կարեւոր օջախներ են հանդիսանուած նաև մեր ինստիտուտները, առանձնապես մանկավարժական ինստիտուտները: Ես հատկապես նկատի ունեմ Խելչատուր կազմակերպության կազմական մանկավարժական ինստիտուտը, ինչին մանկավարժական ինստիտուտը և Երևանի մանկավարժական ինստիտուտը, ուր նույնպես աշխատուած են հայ ժողովրդի պատմության, գրականության և լեզվի մասնագիտներ, դասախոսուած են այնուեղ և միաժամանակ գիտական աշխատանք կատարում:

Հայագիտական աշխատանքները, ինչպես և գիտության բոլոր ասպարեզների աշխատանքները, մեզ մոտ կատարվուած են ըստ նեղ մասնագիտությունների: Մեզ մոտ դուք երբեք չեք հանդիպի մի պատմաբանի ընդհանրապես, չի կարող որեւէ մեկը լինել ամենագետ պատմաբան: Մեզ մոտ պատմաբանը ունի իր նեղ մասնագիտությունը: Ո՞ր ժողովրդի պատմության պատմաբան ես, և արդ պատմության ի՞նչ շրջանի մասնագիտ: Չի կարող մեկը ասել թե ես հայ ժողովրդի պատմության բոլոր շրջանների մասնագիտ եմ: Ընդհանուր, բազմակողմանի զարգացությունը, իհարկե, պիտի ունենա, բայց դրա հետ նաև՝ յուրաքանչյուր հայագետ ընտրում է իր նեղ մասնագիտությունը և խորանուած նրա մեջ: Արդյունք է դրվուած մեզ մոտ հարցը, արդպես են խորացվուած, մասնագիտացմունքը դուքը գիտությունները, որոնց թվուած նաև հայագիտությունը: Կաշխատես ըստ նեղ մասնագիտական խմբերի ներկաւացնել հայաստական մեջ նորություններու:

Ես սկսուած եմ հնագիտության սասարդողից հնագիտությունից, այն ուսությունից, որը կապված է երկողի աեղուաների հետ: Դուք գտեք, որ մեր Հայրենիքը հարուատ է հնու-

թյուններով։ Մուս գիտնականներից մեկը
շատ դիպովէ և ասել, թե «Հայաստանը հնու-
թյունների թանգարան է առանց տանիքի»։
Իրոք, Հայաստանում ամեն մի քայլափոխում
դուք կհանդիպեք հին և միջին դարերի մի
հուշարձանի, և երբեմն շատ արժեքավոր հու-
շարձանի։ Հայագիտության այս ճյուղը կոչ-
ված է փորբիրելու և գետնի տակից դուրս հա-
նելու, լուսաբանելու մեր անցյալի հողով
ծածկված հնությունները։

Այս ասպարեզովամ կատարված խոշոր աշ-խատանքներից մեկը վերաբերուամ է նախնա-դարյան հասարակության ամենահնագույն շրջանին։ Այս ասպարեզի ամենանշանակա-լից գյուղոր կապված է մի հասարակ, փրտակ դիտական աշխատողի՝ Սանդրո Սարդարյանի անվան հետ։ Մի գյուղացի մարդ, որ Վաղար-շապատի շրջանի գյուղերի մեկից եկել է սո-վորելու երևանի համալսարանուամ, հաջողու-թյամբ վերջացնել է այն և մտել Ավագդեմիա աշխատելու Այս երիտասարդին հաջողվել է Արագածի լեռնախմբի մեջ մտնող Արտին լե-ռան Արեգոնի բլրի Սատանի դար կոչվող վայրուած գտնել բազմա թիվ օբանդիանի գոր-ծիքներ (Հասիկներ, քերիչներ, կացիններ, մուրճեր և այլն), որոնք հին քարեդարյան կամ պալեոլիտյան շրջանին են պատ-կանում և մարդկային կուպուրայի ամե-նահին նմուշներն են հանդիսանուամ։ Արդպիսի գործիքներ գտնված են Ֆրան-սիական, Չինաստանում և այլ վայրերուում։ Սարդարյանի այդ գյուղոր մեծ հետաքրր-ըքրություն ստեղծեց մեր հնագետների շըր-շանուամ։ շատերն անդրադառան այդ գյու-տին, և վերջ ի վերջո բոլորը եկան այն եղրա-կացովիյան, որ Սարդարյանի գյուղոր իրա-պես բացառիկ է դրանով փաստվուամ էր, որ Հայաստանը մարդկային հնագույն քնօրրան-ներից մեկն է, եվ այժմ Սովետական Միու-թյան ժողովուրդների պատմության դասըն-թացքներուած Հայաստանը դրվուամ է աշխարհի հնագույն պատմություն ունեցող այն ժողո-վուրդների շարքուամ, որոնք անցել են հին քա-րեդարյան շրջանով։ Պետք է ասեմ, որ նախ-քան Սարդարյանի գյուղոր, իշխող տեսակետն այն էր, որ Հայաստանը չի ապրել հին քարե-դարյան շրջանը, որովհետեւ կարծվուամ էր, որ Ան ծովը և Կասպից ծովը ժամանակին միա-ցած են եղել, իսկ Անդրկովլիասի բաց տեղե-րուած եղել են խոշոր հեղեղուաներ, որոնք և ակոսել են մեր երկիրը, և ելնելով սրանից եղրակացնուամ էին, թե հնարավոր չէ հին մարդկային բնակություն փնտրել մեզ մոտ։ Ծիշտ է, նախքան այդ գոտնվել էին հին քարե-դարյան գործիքներ — Մորգանի գյուղոր Ա-րագածի փեշերին, ինչպես և մամոնտի որոշ մնացորդներ լենինականում և Երևանի մո-տիկի, Ինչպես Հայտնի է, մամոնտին հետեւուամ

է մարդը՝ նրան որսալու և նրա մսով և ողնութեղով սնվելու համար։ Սակայն այդ ամենը ենթադրուական եղանացով փրուններ էին համարվում, եղանացովից աներ՝ խախուս ժիմքի վրա։ Խոկ Սանդրո Սարդարյանի գյուտից հետո անվիճելի դարձավ և հեղինակավոր բոլոր գիտնականները համաձայն լիցին, որ Հայաստանը, իրոք, հնագույն մարդկային սակուռիան վայրերից մեկն է եղել։

Հնագիտական պեղումների ամենախոշոր
աշխատանքները մեզ մոտ կատարվում են Ե-
լևանոս, Կարմիր բլուր կոչվող վայրում: Այս
աշխատանքները ղեկավարում է պղոփ. Բ. Բ.
Թիոտրովսկին, որին կատակելով «Փիսա» ենք
ասում, որովհետև կինը հայունի է: Նա, խան-
դավառված իր գուտերով, տարիներ շարու-
ակ փորփրում է գետինը: Ու պետք է տակը,
որ նրա կատարած պեղումները բացառիկ
արժեք ունեցան մեր պատմովթյան համար:
Են հարցը, որ Ուրարտուի պատմովթյան վեր-
ին շրջանը շատ հետաքրքիր է և սերուորին
ապագած մեր հայրենի երկրի պատմովթյան
հետ, այդ, անվիճելի, ապացուցեց Պիտրովի-
լին, և ապացուցեց՝ Կարմիր բլուրի պեղում-
երի հիման վրա: Այսինքն բացվեցին հա-
յուրավոր սենյակներ, հայտնաբերվեցին հա-
յարավոր զանազան իրեր: Բարեխախաբար,
ուս շքել ամրոցը երբ ընկել է, ընկել է սկյու-
թական հարձակումից, ընկել է հրդեհից, և
որովհետև նրա տանիքը եղել է փայտածածկ՝
տատի և հրդեհված ամբողջ սանհիքը նստել
, հարյուրավոր սենյակներն ավերվել են,
ուղղով ծածկվել, ստեղծվել է հողե մի բլուր,
որը հետագայում հայտնի է դարձել Կարմիր
լուր անոնավու: Ու որ չի ենթագրել, որ այդ
լուրն իր տակ ծածկել է հնությունների մի
սմբողջ թանգարան: Պիտրովսկու բացա-
յայտած հնությունները բացառիկ արժեք ու-
նեն: Այսպես օրինակ, հայտնաբերված է
Տակայական քանակովթյամբ կիսածխացած
որեն, վարսակ, ջովի և այլն, որով փաստվում
երկրագործության զարգացումը Ուրար-
տուում: Ի գեպ, մեր գյուղատնտես մասնա-
կետները հայտնաբերված այդ ցորենից հա-
յարում են վայրի ցորենից դեպի ընտանի
որենն անցնող տեսակ: Հայտնաբերված ին
եկորատիկ վահաններ, սաղավարտներ, կա-
զարձներ, որոնք ունեն ուրարտական զար-
աքանդակներ և մետաղյա զանազան իրեր, աման-
եր և արև:

Հայտնաբերված նյութերից առանձնապես ուղարգության արժանի են մշակած քարերը. Նրանք այնքան գեղեցիկ են, այնքան լավ հովված, որ մարդ ակամա ապշում է ուրարտական քարակոփության վրա: Կարմիր գլրից երեան եկած նոր հայտնաբերումների հիման վրա սովորական գիտնականները եկել են:

այն եզրակացության, որ Ուրարտուն եղել է մեկը այն երկրներից, որ առաջին անգամ երկաթ է գործածվել: Քանի որ մենք Ուրարտուի ժողովուդին համարում ենք մի ժողովուդի, որը հիմնականում ասխմիլացիայի և նիտրակվեց, այսինքն ձովվեց մեր ժողովուդի էթնիկ խմբի մեջ, ուստի և այն մշակութիթ, որ ստեղծել են ուրարտացիները հիմնականում, մենք, հայրենի պատմարաններս, համարում ենք հայ ժողովուդի սեփականություն: Պրոֆ. Պիուրովսկին Կարմիր բլրի պեղումների արդյունքները հրատարակել է «Կարմիր բլրը Խ և «Կարմիր բլրը Ա» խորագուերով աշխատությունների մեջ:

Պեղումների երկրորդ խորմբը կատարվում է Դվինում, Դվինի պեղումները զեկավարում է դոցենտ Կարո Ղաֆաղարյանը, մեր շնորհալի հնագետներից մեկը, որը միաժամանակ տնօրենն է մեր Պետական պատմական թանգարանի: Դվինի պեղումները կատարում են թանգարանի գիտական աշխատողները: Այս սեղումները ևս հետաքրքիր նորություններ են բերել հայ ժողովուդի պատմության, հատկապես մեր միջին դարերի պատմության համար: Այն հնթագրությունը, որ Հայաստանում գտնված կուլտուրայի որոշ մնացորդներ եկամուտ են, դրսից բերված, հերքում է Դվինի պեղումներով, որովհետև Դվինում գտնված են տեղական արտադրության բաղմաթիկ նմուշների: Պեղումների արդյունքները ճշգույտ են արարական աղբյուրների տեղեկությունները Դվինի մասին՝ որպես արհեստավորական և առևտրաշատ խոշոր կենտրոնի:

Պեղումների երրորդ խորմբը կատարվում է Գառնիում: Երևի գուգ թերթերում կարդացել է, որ պատահական ձեռվ մեր նկարիչներից մեկը՝ ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանը Գառնիում գտել է հոմարեն մի արձանագրություն, Այդ արձանագրությունն առաջին անգամ ուսումնասիրեց և «Սովետական Հայաստան» թերթում հրատարակեց Հանգույցալ պրոֆ. Ստ. Լիսիցյանը, Նա առջին անգամ հաղորդեց, որ այդ արձանագրությունը պատկանում է Հայոց Տրդատ թագուհին: Հետագայում այդ արձանագրությունը շուրջ ստեղծվեց բավականին մեծ հետաքրքրություն: նրա վերծանումով զբաղվեցին պատկանը: Մանանդյանը, պրոֆ. Տրեմիքը և մենք: Պարզվեց, որ այդ խակապես ուշագրավ մի արձանագրություն է, Արշակունյաց թագավորության շրջանից: Մեզ մոտ միայն վեճ առաջացավ այն մասին՝ թե ո՞ր Տրդատի արձանագրությունն է, Տրդատ առաջինի, թե երկրորդի: Բայց քանի որ արձանագրության մեջ ասվում է, թե տաճարը կառուցվել է ի պատիվ «Այրի աստվածներ»ի, ուստի և անվիճելի դարձավ, որ այդ առաջին Տրդատի,

այսինքն Արշակունյաց հարստության հիմնադիր Տրդատի կառուցան է:

Այս արձանագրության գյուղը մեր հնագետներին միտք ներշնչեց ձեռնարկելով Գառնիի պեղումները, որը պետք է ասել, տվեց լավ արդյունքներ: Հողի շերտից բացվեց հրաշական պարիսպը, շարված մինչև 8 տոննա ժանրություն ունեցող բազալտ քարերից: Հայտնաբերակեցին բազմաթիվ իրեր, դրամներ, գործիքներ և այլն: Բացվեց մի շատ հետաքրքիր շենք՝ մողակածածկ (խճանկար) հատակով, թագմագույն խճաքարերով հատակի վրա զարդանկարված են մարդիկ, ձկներ և հումարեն գույթյուններ: Ենթադրում են որ այդ արքայական բազմիքի շենք պիտի եղած լինի: Հայտնաբերված այդ մողակիկան հետաքրքիր է ոչ միայն այն տեսակետից, որ բացարկ մի նորությունը է քերում իր պարունակությամբ, այլ հաստատում է մողակայի արվեստի գոյությունը մեզ մոտ միշտածվաղեմի շրջանից: Մենք ունենիք քրիստոնեական շեամփուլ կամ բազմագույն խճաքարերով հրավերվել է Դվինում, մի նոր մողակիկա հայտնաբերվել է Դվինում, ահա ձեզ և նոր մողակիկա՝ հեթանոսական շրջանից:

Հնագետների մի խումբ պեղումներ է կատարում երևանից 6 կիլոմետր հեռագործթյան վրա գտնվող Արին բերդի ուրարտական ամրոցում:

Հայաստանում պեղումների կատարում է կատարում և Հնությունների պահպանության կոմիտեն: Այստեղ աշխատողներից են պիտի հիշեմ Հ. Եղիազարյանի՝ տասնյակ տարիներ հնություններով զբաղվող, հնությունների հետ իր կյանքը կապած մի պատվական գիտնականի անուն: Նա համագում է մեր միմագիր արձանագրությունները, և արդեն զգալի աշխատանք է կատարել այդ ուղղությամբ:

Հնագետության ասպարեզում շոշափելի աշխատանք է կատարել դրամագիտ Ավալան Շահնազարյանը, ինչպես և Թորամանյանի աղջիկը, որ զբաղվում է իր հոր թողած գիտական ժուռանգրությունը հրատարակության պատրաստելու գործով:

Ի՞նչ աշխատանք է կատարվում աղբյուրագիտության գծով:

Աղբյուրագիտության գծով հրմանական աշխատանքը մեզ մոտ տանում է Պետական Մատենադարանը, և որոշ շափով՝ նաև Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտը:

Մենք ուզում ենք թվարկել այն աշխատությունները, որոնք կարծում ենք, ձեզ համար նորություն են և կարող են հետաքրքիր լինել:

Ամենից առաջ, պետք է ուրախությամբ այստեղ հայտարարենք, որ արդեն ավարտած է Եղիշեի պատմության գիտական-համեմատական տեխստի կազմելու աշխատանքը. Չու-

առվ մենք կունենանք Եղիշեի՝ 5-րդ դարու աղատագրական շարժման մեր այդ ականավոր պատմիլի. գիտական-համեմատական տեքստը ճիշտ այն ձևով, ինչ ձեռվ ժամանակին կազմված է Խորենացու, Արքաթանգեղոսի և մի քանի այլ մատենագիրների համար, Եղիշեի Պատմության տեքստը կազմել է հայտնի բանասեր պրոֆ. Երվանդ Տեր-Մշինասյանը: Այս գործը այս տարի, կարծում եմ, լուս կտեսնի:

Աղբյուրագիտական բնույթ ունեն և շատ արժեքավոր են վավերագրերի այն ժողովածուածերը, որոնք կազմվուած են մեր Ակադեմիայի Պատմության ինստիտուտի նախաձեռնությամբ: Նրանք վերաբերուած են հայ ժողովրդի պատմության նոր շրջանի մկրդուածին: Այս աշխատանքը կատարուած են Ակադեմիայի մի խումք գիտականիներ, որոնք ցարական նախակին արխիվներից ուսումնասիրուած և հանուած են այս բոլոր վավերագրերը, որոնք արժեքավոր են մեր ժողովրդի պատմության համար: Այդ շարքի առաջին հատորը լուս է տեսել պրոֆ. Վարդան Պարամյանի գլխավորությամբ և այժմ աշխատանք է տարվուած երկրորդ հատորի վրա:

Մատենադարանի դիրեկտոր (առնօրեն) Լեվոն Խաչիկյանը կազմել է Հիշատակարանների ժողովածուի երկրորդ հատորը, որ դարձալ ծրագրված է այս տարի հրատարակվելու համար:

Պրոֆ. Կարո Մելիք-Օհանջանյանը, որը մեր հին և հանաշված հայագետներից է, այն գիտնականը, որ հանգույցալ Մանուկ Արեդյանի հետ միասին կազմեց ու հրատարակեց ՇԱՍԱՆ ժողովածուն, այժմ աշխատուած է Կիրակոս Գանձակեցու Պատմության գիտական տեքստի կազմելու աշխատանքի վրա: Կիրակոս վարդապետ Գանձակեցին, ինչպես հայտնի է, մեր լավագույն պատմիւներից է, սակայն նրա պատմության հրատարակված տեքստուած տեղ են փոել բարձմաթիվ աղաղուածերի: Պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյանը մեր Մատենադարանի լավագույն ձեռագիր բնորոինակությունների հիման վրա կազմուած է Գանձակեցու գիտական-համեմատական տեքստը:

Մատենադարանի հանձնարարությամբ մի քանի տարի է, որ մենք աշխատուած ենք Հովհաննես Սարկավագի գիտական մատենադրության վրա: Հայտնաբերված են ավալուած մատենադրության վրա համար կազմակեցին կազմակեցին մեջ: Երկի դուք ծանոթ եք օրիորդ Դուռնովայի կազմած և խրմագրած «Հայկական մանրանկարչություն» ալբոմի հետ: Պետք է ասել, որ այդ ալբոմը մանրանկարչության պատմության գծով մեր սկանած աշխատանքների սկիզբն է միայն, նրա առաջին պրակը: Ի դեպ, հայ մանրանկարչությունը մի խումք մասնագետներ, օրիորդ Դուռնովայի գլխավորությամբ, այժմ աշխատուած են էջմիածնի Մայր Տաճարի մանրանկարչության վրա՝ նպատակ ունենալով վերականգնել նադաշ Հովհաննի նախկին բոլոր որմաննկարները: Այս տարի ուսուերեն թարգմանությամբ լուս տեսան Միհթար Հերացու աջմաման մխիթարութիւնս աշխատությունը և Միհթար Գոշի «Թատաստանագիրքը»:

առջև խնդիր ենք գրել հավաքել մեր մանր ժամանակագրությունները, որոնք ցրված են ձեռագրերուամ, — նրանց մի մասը տպագրված է, իսկ մյուս մասն անտիպ, — և ամփոել առանձին հատորների մեջ: Այդ աշխատանքը ծրագրված ձևով առաջ է տարգում: Հակոբյանն այժմ պատրաստել և տպագրության է հանձնել «Մանր ժամանակագրությունները»ի երկրորդ հատորը:

Զգալի աշխատանք է կատարվել նաև մեղմության աշխատական տաղեղի հավաքման և ուսումնասիրության ուղղությամբ: Այդ գործի վրա աշխատում է հայագետների մի ամբողջ խումքը — տիկին Շուշանիկ նազարյան (բանասիրական գիտությունների թեկնածու), տիկին Մայրի Ավլայրեկպյան (բանասիրական գիտությունների թեկնածու), Ա. Մնացականյան (Մատենադարանի գիտական աշխատող) և ուսումնական նադաշ Հովհաննի աշխատանքը գրական աշխատական տաղատողը) և ուսումնական տաղեղի հավաքման և ուսումնասիրության ուղղությամբ: Այդ գործի վրա աշխատում է հայագետների մի ամբողջ խումքը — տիկին Շուշանիկ նազարյան (բանասիրական գիտությունների թեկնածու), տիկին Մայրի Ավլայրեկպյան (բանասիրական գիտությունների թեկնածու), Ա. Մնացականյան (Մատենադարանի գիտական աշխատանքը գրական աշխատական տաղատողը) և ուսումնական նադաշ Հովհաննի աշխատանքը գրական աշխատական տաղատողը:

Աղբյուրագիտական տաղեղի հավաքման գործում մեծ աշխատանք է կատարվել նաև մեղմության աշխատական տաղեղի հավաքման գործում:

Աղբյուրագիտության խմբին պետք է գտնել նաև մանրանկարչության պատմության գծով կատարված ուսումնասիրությունները: Պետք է ասել, որ ոչ միայն հայ, այլև ուսումնական մյուած ժողովուրդների մասնագետների կարծիքով, հայ մանրանկարչությունը բացառիկ տեղ ունի մարդկային կուտուգայի պատմության մեջ: Երկի դուք ծանոթ եք օրիորդ Դուռնովայի կազմած և խրմագրած «Հայկական մանրանկարչություն» ալբոմի հետ: Պետք է ասել, որ այդ ալբոմը մանրանկարչության պատմության գծով մեր սկանած աշխատանքների սկիզբն է միայն, նրա առաջին պրակը: Ի դեպ, հայ մանրանկարչությունը մի խումք մասնագետներ, օրիորդ Դուռնովայի գլխավորությամբ, այժմ աշխատուած են էջմիածնի Մայր Տաճարի մանրանկարչության վրա՝ նպատակ ունենալով վերականգնել նադաշ Հովհաննի նախկին բոլոր որմաննկարները: Այս տարի ուսուերեն թարգմանությամբ լուս տեսան Միհթար Հերացու աջմաման մխիթարութիւնս աշխատությունը և Միհթար Գոշի «Թատաստանագիրքը»:

Բարձր պատրաստություն ունեցող մի խումքը հայագետներ տեսական-հետազոտական լուցք աշխատանքներ են կատարուած հայ ժողովուրդի համար ամբողության նշանակությունը ունեցող հարցեր լուծելու ուղղությամբ: Այս խմբի մեր գիտականների գործի կամաց ակադեմիկոս Գրիգոր Համբանցյալ:

նը։ Զնայած իր առաջացած տարիքին, իրի-
տասարդի ավլունով աշխատում է նա
մեր անցյալի պատմության և լեզվի կնճռուտ
հարցերը լուսաբանելու ուղղությամբ։ Նրա
ուսումնասիրության թեման գլխավորապես
մեր նախարանիների պատմությունն է ու լե-
զուն՝ ովքե՞ր են եղել մեր երկրի նախաբնիկ-
ները, ի՞նչ մշակութ են ունեցել, ի՞նչ առն-
չություն են ունեցել մեզ հետ, ի՞նչ փոխհա-
րաբերությունների մեջ են գտնվել մեր հարե-
վանների հետ և այլն. խնդիրներ որոնք հա-
զարավոր տարիների հնություն ունեն և ո-
րոնց լուծումը կապված է մեծ գժիգառու-
թյունների հետ։ Բայց մեր մեծանուն գիտնա-
կանի քաջ հմտությունը հին աղմելյան մի
շարք լեզուների, ընձեռում է նրան հնարա-
վորություններ՝ հեռավոր անցյալի շատ կընձ-
ռում հարցերի լուծման համար։

Այս նույն ժամանակաշրջանով զրադշում է Մարգո Խարայելյանը՝ մեր լավագույն ուրար-
տագետներից մեզ։ Ի պատրիվ մեր աղջր-
կանց և կանանց պետք է ասեմ, որ կանայք
մեզ մոտ խոշոր գործ են անուած և արժեքա-
վոր մուծաներ ունեն գիտության ասպարե-
զում։ Մարգո Խարայելյանը այժմ զրադշա-
ծ է ուղարկան արձանագրությունների հա-
վաքման, գիտական մշակման և թարգմանու-
թյան գործով։

Հայ ժողովրդի պատմության հին շրջանի
մեր լավագույն ուսումնասիրողներից է
պատմական գիտությունների գոկորո Սուրեն
Երեմյանը, մեր Ավագեմիայի Պատմության
ինստիտուտի դիրեկտորը։ Այս գիտնականը
վերջերս գտնվում էր Լոնդոնում, մասնակ-
ցում էր այնտեղ հրավիրված արևելագետնե-
րի ժողովին, և հանդես եկավ գիտական զե-
կուցանում։ Նա վերին աստիճանի հավասա-
րակշռված, գիտականորեն պատրաստված և
սովոր տրամաբանությամբ օժտված գիտնա-
կան է։ Նա հատկապես խոշոր գործ է կա-
տարում Արտաշիայան շրջանի տնտեսական
կյանքի ուսումնասիրության ուղղությամբ։
Նա է առաջադրել ստրկատիրական հասարա-
կության թերզ հին Հայաստանում։ Նրա առաջ-
քաշած այս և մյուս թեզերն, ընդհանրապես,
ինքնատիպ են և հետաքրքիր։

Հայ ժողովրդի պատմության ուսումնասի-
րության գծով մնած աշխատանք է կատարում
Մորուա Հասրաթյանը՝ մի համեստ գիտնա-
կան, որի անուած գուցե այստեղ չեք էլ լսել,
բայց որը, իրավանության մեջ, աղաղանդա-
վոր անձնավորություն է։ Նա այժմ աշխա-
տում է հայ ժողովրդի պատմության միջնա-
կարգ դպրոցների դասագրքի վրա։

Ես, ի վեպ, պետք է ասեմ, որ հայ ժողո-
վրդի պատմության գիտական դասրանքագի
կազմում մեզ համար կարևոր մի խնդիր է,
քանի որ մեր բոլոր դարրացներում, առանց

բացառության, նույնիսկ Հայաստանում ե-
ղած ուսական դպրոցներում, պարտադիր
ձևով անցնուած են Հայերն լիզուն և Հայ ժո-
ղովրդի պատմությունը որպես Մայր Հայրե-
նիքի պետական լեզու և պատմություն։ Ըստ
որում, մեր դպրոցների բարձր դասարաննե-
րում հայ ժողովրդի պատմությունը զասա-
վանքվում է երեք ստարվագ զամբոնթացքով՝
հին, միջին և նոր։ Հայ ժողովրդի պատմու-
թյան բարձրագույն դասընթացքը դասավանդ-
վում է մեր մանկավարժական ինստիտուո-
ների և Պետական համալսարանի պատմու-
թյան և բանասիրական ֆակուլտետներում,
ներառյալ նաև ուսական բանասիրական
բաժիններ։

Հայ ժողովրդի պատմության գիտական
դասընթացք կազմելու գործում, Մորուա Հաս-
րաթյանի հետ միասին, զգալի աշխատանք
է կատարում դրցենու Համո Հարությունյա-
նը։

Դուք ճանաշում եք անշուշտ Հայկակ Ժամ-
կոյշանին։ Ճեր այսաեղի որբերից է, որ եկել
է Հայրենիք, իր ընդունակություններով հասել
է բարձուանքների և այժմ զեկավարուած է մեր
Պետական համալսարանի պատմության ֆա-
կուլտետը։ Իսկ Համո Հարությունյանը վանե-
ցի է, հայ ժողովրդի պատմության նվիրված
մի մասնագետ, որ հոգեին ապրում է իր ա-
ռարկայով։ Աշխատում է մանկալսարժական
ինստիտուտում։ Նա հայ ժողովրդի պատմու-
թյան որևէ շրջան դասախոսելիս կոնսավեկտ
շի օգտագործում։ մի զավացան ովհի ձեռքը,
որ գետին խփելով բարձրանում է ամրիոն,
հարցնում՝ «որտե՞ղ կանգնեցինք», և հան-
դիստ շարունակուած դասախոսությունը։

Պետական համալսարանի մեր ճանաշված
դասախոսներից է Մերոր Պողոսյանը, որը ու-
սումնասիրում է հայ ժողովրդի պատմության
միջին դարերի սոցիալ-անտեսական հարա-
բերությունները։ Իր այդ ուսումնասիրության
երկու հատորները, ավելի քան 1.000 էջ ծա-
վալով, որպես գոկտորական թեզ ներկայաց-
րել է քննության հայ ժողովրդի պատմության
մեր ամբիոնին։

Հայ ժողովրդի պատմության արարական և
մոնղոլական շրջանների մասին արժեքավոր
հետազոտություններ են կատարել երիտա-
սարդ գիտնականներ կեռն Բարազնը, Հայ-
կարամ Ովթմազյանը և Ատեփան Մելիք-Բաշ-
խյանը, երեքն էլ պատմական գիտություն-
ների թեկնածուներ։ Նրանց ուսումնասիրու-
թյունները լույս են տեսել մեզ մոտ։ Մելիք
Բաշխյանի աշխատությունը նվիրված է Պալ-
լիկյան սոցիալական շարժմանը։

Հայրենիք երկրում զգալի աշխատանք է
կատարված նաև Կիլիկիայի պատմության ու-
սումնասիրության ուղղությամբ։ Ես ի նկա-
տի ոմնիմ առաջին հերթին հանգուցյալ պրոֆ.

Գրիշա Միքայելյանի «Կիլիկիայի պատմությունը» աշխատությունը, որը, իմ վարդիքով, Կիլիկիայի պատմության ամենից գիտական և վերլուծական ռառավանասիրությունն է: Նա օգտագործել է ոչ միայն մեր հայ մատենագիրները, ելքուպական ու հայ գիտնականների ուսումնասիրություններ, այլև բազմաթիվ հիշատակարաններ և այլ աղբյուրներ, որոնք մեծ նորություն են բերում Կիլիկիայի պատմությանը: Կիլիկիան շրջանով դրադվում է նաև դոցենտ Աշոտ Գալստյանը, թեզ ունի «Հեթուակը որպես դիվանագետ», նրա բանակցություններով Մանկու Խանի հետ»:

Հայ փիլիսոփայության պատմությամբ է զբաղվում դոկտ. Վազգեն Զալոյանը, հայ փիլիսոփայության պատմության շնորհակի մասնագետներից մեկը: Նա գիտի հին հունարեն ու հին հայերեն լեզուները, տիրապետում է հայ փիլիսոփայության պատմությանը: Նա հրատարակած ոման ուսումնասիրություններ՝ Եղիշիկի և Դավիթ Անհաղթի մասին, իսկ այժմ աշխատում է Վերածննդի հարցի վրա: Զալոյանի կարծիքով, Վերածննդը, որը համարվում է ելուոպական երազվթ, նախապես ստեղծվել ու զարգացել է Արևելքում: Վերածննդի նախնական հայրենիքն և հանդիսացել Արարիան, Պարագաստանը և Անդրկովկասը: Պետք է ասել, որ նա բավականին համոզեցուցիլ փաստեր է բերում այն մասին, որ արևմտյան ելքուպացիները շատ բնորդինակել են մեր՝ արևելյան ժողովորներից, յուրացրել են ճարտարապետության որոշ ձևեր, մանդանկարչական արվեստի նմուշներ, սոցիալական գաղափարներ և այլն: Այս մասին ես շեմ ցանկանում ժամանակվել, որովհետեւ այս թեմայով ես զեկուցում ունեմ և կիսում իր ժամանակին: Փիլիսոփայության պատմությամբ է զբաղվում նաև մեր լուրջ գիտնականներից պրոֆ. Հենրի Գարբրիելյանը:

Նոր շրջանի պատմության մեր լավագույն ուսումնասիրողներից է պրոֆ. Վահան Ռիշտունին, Պետական համալսարանի մեր հին պրոֆեսորներից, որը մեր միջին սերնդի պատմաբաններից շատերի ուսուցիչն է եղել:

Հայագիտության մեջ արժեքավոր ներդրում ունի դոցենտ Թենիամին Հարությունյանը, որը ուսումնախում է հայ ժողովորդի տնտեսական կյանքի պատմությունը:

Նոր շրջանի մեր լավագույն պատմաբաններից է պրոֆ. Վարդան Պարսամյանը. նա զեկավարում է պատմաբանների այն խըմբին, որը, ինչպես ասացի, զբաղված է Մոսկվայի արխիվներում հայուսական հարաբերություններին վերաբերող վասկերագրեր հավաքելով:

Նոր շրջանի մեր պատմության լավագույն մասնագետներից են պրոֆ. Մ. Ներսիսյանը,

պատմական գիտությունների թեկնածուներ Շմավոն Հարությունյանը, Վարդան Ավետիսյանը, Ավետիք Աղամյանը, Խաչիկ Բաղալյանը, Օ. Խնձորեանը, Թենիկ Օհանջանյանը, Արշավիր Հարությունյանը և սասնյակ երիտասարդ այլ պատմաբաններ, որոնք ուսումնասիրություններ, այլև մաթեմատիկան շրջանուն վերաբերող աշխատությունները: Հայ ժողովով պատմության նոր շրջանին վերաբերող աշխատությունների վրա, դժբախտաբար, մենք կանգ առնելու հնարավորություն շունենք, բայց կարող եմ հավատիացնել, որ նրանք իրենց մեթոդով փական իրենց ակզրումքայությամբ շատ բարձր են կանգնած:

Իտարբերություն մեր անցյալի հայագիտության, մեզ մոտ այժմ մեծ ուշադրություն է դարձվում գիտության պատմությանը: Պարզվում է, որ մեր պապերը, մեր գրասեր պապերը, իրենց համեստ մուծումներն ունեն նաև գիտության պատմության մեջ:

Մեզ մոտ, բժիշկների մի ամբողջ խումբ ուսումնասիրում է հայ բժշկության պատմությունը: Պետք է ասել, որ հայ ձեռագիրը շատ հարուստ են բժշկաբաններով, բժշկաբաններ, որոնք ամփոփում են, կարելի է ասել, ողջ Սբեկելի իմաստասիրությունը. այնուղի դուք կփոնեք և՛ արարական, և՛ պարսկական, և՛ ատորական, և՛ հրեական, և՛ տեղական՝ հայկական բժշկության վերաբերող հազարավոր, տասնյակ հազարավոր դեղատումներ այս կամ այն հիվանդության մասին: Եկայ ամենը պահպել են հայ բժշկաբաններում:

Հայ բժշկության պատմության ուսումնասիրում քաղաքողներից միայն ակադ. Ս. Մամիսայանցն է, որ բժիշկ չէ եղած, իսկ մյուս բոլորը բժշկներ են: Հանգուցյալ Մայիսյանցը հրատարակել է Ամերիդովաթի, 17-րդ դարի հայ նշանալոր բժշկի «Ճգուտ բժշկութեան», Շիառական բժշկութեան» և «Ամիւրաբադին» աշխատությունները: Սակայն նա չի կարող այս արդյունքն ունենալ, ինչ որ հետագայում ունեցան բժիշկ մասնագետների, որոնք այս կամ այն խնդիրը կարողանում են հետո ըմբռնել և պատշաճ ձևով գնահատել: Միոպթենական ակադեմիայի իսկական անդամ պրոֆ. Լեռն Հովհաննիսյանը ուսումնասիրել է ու հրատարակել «Հայ բժշկության պատմությունը», բաղկացած հինգ մեծածավալ հաստորներից, ուսաներեն լեզվով, որոնք ամփոփում են հայ բժշկության ողջ պատմությունը: Հստ որով, հեղինակը դեռ ժեղս է իր աշխատանքից, գտնում է, որ փեռ թերի է այն. նա ցանկանում է իր այդ աշխատությունն ավելի բնդարձակել և հրատարակել նաև հայերեն թարգմանությամբ:

Բժիշկներից պրոֆ. Մելիք-Փարսադյանը, ականջի և կոկորդի մասնագետ, երկար

տարիներ ուսումնասիրում էր Մխիթար Հերցու «Յաղագ չերմանց մխիթարութեան» աշխատովթյունը, որը լույս է տեսել վերջերս: Այժմ նա շարունակում է իր աշխատանքները Գաղինուսի բառարանի հայկական տեքստի վրա: Հայ բժշկովթյան պատմովթյան գծով շնորհակալ ուսումնասիրովթյուններ է տալիս երիտասարդ բժիշկ Արծրունի Կծոյանը ևս, որը աշխատում է հայկական բժշկարանների վրա և միաժամանակ Բժշկական ինստիտուտում դասախոսում հայ բժշկովթյան պատմովթյունը, նույն ուսումնասիրովթյան առանձին գլուխները հրամարակվում են Գիտությունների ակադեմիայի տեղեկագրերում:

Հայկական ձեռուգրերում բացառիկ արժեք ունեցող նյութեր հայտնաբերվեցին մաթիմատիկայի պատմովթյունից: Հավանական է գիտեք այն նորովթյունները, որոնք կապված են 7-րդ դարի հայ գիտնական Անանիա Շիրակացու անվան հետ, որին մենք պիտի անդրադառնանք մեր հաջորդ զեկուցումներից մեկում:

Հայոց մաթեմատիկայի պատմովթյան ուսումնասիրովթյան գծով խոշոր գործ է կատարում մեր համալսարանի ուսումնական գիտական գործությունը: Դարեցին Պետքույանը, Ինքը գյուղացու, շարքաշ գյուղացու տղա է եղել, ժամանակին եկել, սովորել է համալսարանում և իր տքնաջան աշխատանքով բարձրացել մինչև դասախոսի և ուսումնական գործությունների: Նա այժմ աշխատում է դոկտորական դիսերտացիայի վրա՝ թեզ ունենալով «Հայ մաթեմատիկայի պատմովթյունը»: Աշխատանքն ավարտել է երկու ստվար հատոր է կազմում այն, ես մոտից ծանոթ եմ այդ աշխատովթյան հետ, և պետք է ասեմ, որ նա կատարել է խոշոր և շատ գնահատելի աշխատանք, մեր ժողովրդին պատիվ բերող աշխատանք, իմ մի գրախոսականում ես առաջարկել եմ այդ ուսումնասիրովթյունը հրամարակել հնչպես հայերեն, այնպես և ոռաերեն, ի հզուներով:

Զգացի աշխատանք է կատարվում նաև ալ-քիմիական ձեռագրերն ուսումնասիրելու ողղովթյամբ: Թվուած է, թե այս մի ասպարեզ է, որ գիտովթյան հետ ոչ մեր կապ չունի, և նրանով զրադակելն անմտովթյուն է: Բայց, իրականովթյան մեջ, մեր գիտնականները պարզեցին, որ այդ ևս արժանի է ուշագրության:

Մեր կին շնորհալի գիտնականներից մեկը՝ Աշխան Տարովթյունյանը, որը զեկավարում է բժշկական ինստիտուտի գիտնական բաժինը, այժմ ուսումնասիրում է հայկական ալքիմիական ձեռագրի ժողովածուները՝ խնդիր ունենալով պարզել մեզ մոտ հնում գործածությամբ ներկերի բաղադրությունը: Կարեւոր հարց է՝ թե մեր ձեռագրերի ներկերը, մասնավանդ մանրանկարչության մեջ գործած-

ված վառ գույները ինչի՞ց են պատրաստված, ինչպես է, որ գարերը չեն կարողացել խունացնել այդ նկարները: Եվ, պետք է ասել, որ տիկին Հարովթյունյանի համար աշխատանքները տվել են արդեն որոշ արդյունքներ: Նրան հաջողվել է պարզել այդ ներկերի վրաց մի քանիսի բաղադրությունը: Նույն իր ստացած գույներով կտորներ է ներկել և ենթարկել փորձարկման— ուժեղ լուսը, օդի աստիճանը չեն ազդում այդ ներկերի վրա: Եվ այժմ մեզ մոտ խոսվում է այն մասին, թե չի կարելի արդյոք այդ գյուտը օգտագործել արտադրության մեջ, ներկել, զոր օրինակ, մետաքսյա կերպասներ և այսի:

Քիմիայի պատմովթյան գծով յուրց աշխատում է նաև դոցենտ Տիգրան Ղազանչյանը: Նա գրել և հրատարակել է մի շարք ուսումնասիրովթյուններ նվիրված քիմիայի պատմովթյանը: Հայաստանուած:

Մեր կին գիտնականներից հայ արվեստի պատմովթյան գծով շնորհալի աշխատանք է կատարում պատմական գիտովթյունների թեկնածու Վալեկ Աբրահամյանը, որի ստվարածավալ աշխատովթյունը՝ «Ալբհետուները հին Հայաստանուած» գտնվում է տալագրության ընթացքի մեջ:

Շատ եմ ցավում, որ դուք այստեղ շեք ստանում մեր Գիտովթյունների ակադեմիայի տեղեկագրերը, ինչպես և մեր Պետական համալսարանի գիտական աշխատովթյունների շարքը: Այդ հատորների մեջ տեղավորված են շատ արժենքավոր ուսումնասիրովթյուններ մեր անցյալի պատմովթյունից, գրականությունից, արվեստի պատմովթյունից:

Մեր գիտնականներից մի քանի հազի զբաղվում են խազերի ուսումնասիրովթյամբ: Ինչպես հայտնի է, մեզ հասել են բազմաթիվ հայերեն գանձարաններ, խաղաղութեր, շարակնոցներ և տաղարաններ, որոնք խաղությամբ են, այսինքն նոտագրված մեզ անհայտ նշաններով: Հայկական խազերով ժամանակին զբաղվել է Կոմիտասը, աշխատել է վերծանել նրանք, բայց արդյունքները մնացել են մեզ անհայտ: Մեզ մոտ հայկական խազերի վերծանման աշխատանքով զբաղվում են Ռոբերտ Աթայանը և Մուշեղ Աղայանը: Դագարու Աղայանի որդին երբ նրանց հաջողվել վերծանել մեր խազերը, այն ժամանակ մենք հնարավորություն կունինանք՝ միայն կարդալու մեր հին տաղերը, մեր գանձերը, մեր շարականները, այն երգել այն եղանակով, ինչ եղանակով ժամանակին երգել են և խաղագրել:

Տասնյակ տարիներ հայկական սոմարի պատմովթյամբ է զբաղվում պրոֆ. Լեոն Սեմյոնովը, նա հայկական տոմարի մասին գրել է մի ուսումնասիրովթյուն երեք հատորից,

որը, որքան մեզ հայտնի է, այս տարի պիտի հանձնմի տպագրության:

Ես չեմ ուզում ծանրանալ լեզվաբանության վրա. ծեզ հայտնի են ակադ. Աճառյանի և նրա աշակերտների ուսումնամիությունները այդ ասպարեզում: Բավական է թեկուզ նշել, որ սկսել է մեծանուն լեզվաբանի «Հայերենի լիակատար քերականություն» ոշխատության հրատարակությունը՝ 552 լեզուների համեմատությամբ: Դուք ծանոթ եք անվանի լեզվաբաններ պրոֆ. Ա. Ղարիբյանի, դոց. Ա. Արքահամյանի, պրոֆ. Գ. Սևակի և պրոֆ. Է. Աղայանի աշխատությունների հետ:

Մի քանի խոսքով ես ցանկանում եմ կանգ առնել այն հարցի վրա, թե ի՞նչ ձևով է մեզ մոտ կատարվում հայագետների մասնագիտացման գործը:

Ինչպես գիտեք, մեզ մոտ երիտասարդների համար լայն հնարավորություններ կան զարդարակու և դրակորելու իրենց ունակությունները, Մեզ մոտ միջնակարգ դպրոցն ավարտած ամեն մի երիտասարդ կարող է սովորել Պետական համալսարանում և 17 տարրեր ինստիտուտներում և սովորել պիտության հաշվին, պետությունից թոշակ ստանալով: Այստեղ ես իմացա, որ ծեզ մոտ ով գնում է համալսարան սովորելու, նրանից փող հնապնում, Մեզ մոտ հակառակն է. Նա՛, ով սովորում է, փող է ստանում, Մեզ մոտ հնարավորություն են ստանում սովորելու և քաղաքի, և գյուղի երիտասարդներն առանց խորանքի:

Մեզ մոտ ուսանողները սովորում են 4—5 տարի: Հինգ տարվա ընթացքում դասախոսությունները է ուսանողների զարգացման ընթացքին և հաշվի առնում, թե ո՞րն է, որ բարագիկ ընտունակություններ է դրակորում: Մեր լավագույն ուսանողների միջից, կամ ինչպես ասում են՝ գերազանցիկ ուսանողների միջից, իսկ գերազանցիկ է կոչվում այն ուսանողը, որը հինգ տարվա ընթացքում անվերջ հինգամեր է շարում իր գնահատականների ցուցակում, ֆակուլտետի գիտական խորհուրդը ընտունակ է հանձնարում է նրան՝ ասպիրանտուրայում ընդունվելու համար: Ահա այսպիս ենք մենք ընդունակությունը այն երիտասարդներին, որոնք ապագայի գիտականներ պիտի դառնան: Բայց սրանով դեռ մեր աշխատանքը չի սպառնում: Երիտասարդի վրա դեռ երեք տարի ևս աշխատանք ենք թափում ղեկավարությունը հանձնելով իր մասնագիտության գծով՝ հանաշված գիտնականի: Դեկավար դասախոսությունը պարեզու է աճեցնել այդ ետիսասարդն այնպիսի հասունության, որ վերջինս կարողանա ներկայացնել իր թեմա-

ծուական դիսերտացիան, այսինքն՝ ավարտական թեզը:

Մի քանի խոսք մեր դաստիարակության մեթոդի մասին. այդ գուցե հետաքրքիր կիշնի այստեղ ներկա գտնվող դաստուներից նրանց համար, ովքեր հայ ժողովրդի պատմության դաստուներ են:

Մեր հարցը մեզ մոտ հաճախ քննության է առնվում: Մեր ժողովրդի պատմությունն ինչ վրա է, որ պետք է ուշադրություն դարձնի: Դուք գիտեք, որ մեր ժողովրդի պատմությունը լի է դրախտավոր մերսվ և դառնություններով, Բայց մենք դրանց վրա չենք, որ ծանրանում ենք: Մեր պատմության մեջ ունենք և հերոսական էջեր, վերջինիս վրա է, որ մենք շեշտ ենք դնում: Մեր ցանկությունն է, որ մեր երիտասարդները ո՛չ թե հոգածիկ մնային անցյալի լաց ու կոծր լսելով, այլ ոգևորվեն, թեավորվեն անցյալի հերոսապատումներով: Մենք ցանկությունը մեր երիտասարդները մեր նախնիների հերոսական էջերի վրա: Մենք շենք ուղարկում ենք երիտասարդները մեր նախնիների հերոսական էջերի վրա: Մենք շենք ուղարկում ենք երիտասարդները, մեր ուսանողները ճնշվեն այն մասայնությամբ, որ մենք խեղճ ենք եղել, որ մեր պատերը միամիտ են և այլն:

Հայրենասիրության հետ միասին մենք դաստիարակում ենք նաև մարդասիրության վեհ սկզբունքով: Մենք ասում ենք՝ սիրեցիք քայլությունը, սիրեցիք՝ ձեր ժողովուրդը, սիրեցիք՝ քայլության շարպնիքը, սիրեցիք՝ քայլությունը ողջ հոգով, ձեր սրտով, բայց միևնույն ժամանակ մի՛ ատեցեք ձեր ժողուրդը հարաւաններին: Այս մեր դաստիարակության հիմնական սկզբունքներից մեկն է՝ յինել հումանիստ, լինել մարդասեր:

Եվ ի պատիվ Սովորական Հայաստանի մեջ աճող, բարձրացող սերնդի, պետք է ասել, որ նրանք բազու են կանգնած, բարձր մեր միջին սերնդից, բարձր իրենց հայրեն ու սիրությամբ, արժանապատվության գիտակցությամբ, ընկերասիրությամբ ու մարդասիրության վեհ գաղափարաներով:

Եվ, վերջապես, մի քանի խոսք մեր հայրենագրածների մասին՝ կապված հայագիտության հետ, որը, անշոշտ, ձեզ շատ է հետաքրքրուում:

Ինչպես ուսման և աշխատանքի բոլոր ասպարեզներում, այնպիս և հայագիտության ասպարեզում մեր հայրենագրածները լիովին արդարացրին իրենց: Մեր հայրենագրածների մեջ գտնվեցին շնորհալի երիտասարդներ, որոնք մասնագիտանալով մեր բարձրագույն ուսումնական հաստատություններում, ի շարք գիտության մի շարք ասպարեզների, կարողացան օպտակար լինել նաև հայագիտական ասպարեզում: Նրանց հաջողության գործում պետք է առանձնապիս նշեն մեր

Հայրենի պետության, մեր կազմակերպությունների, մեր գիտնականների և դասախոսների ցուցաբերած բացառիկ սրտացավ վերաբերմունքը: Գալունիք չէ, որ միջնակարգ կրթությունը դրսում ստացած մեր ուսանողությունը վատ գիտեր հայոց լեզուն, հայ ժողովրդի պատմությունը, մասամբ նաև՝ դրական գիտությունները՝ ֆիզիկան, մաթեմատիկան և քիմիան: Կարելի է ասել բոլորը վիճակին ուղարկուած հեղուած: Հայրենիքի դասախոսները նախ աշխատեցին վերացնել դրսից եկած իրենց եղբայրների այդ թերությունները, օգնեցին հասնելու իրենց ընկերներին, և կարծ ժամանակում հայրենադարձները կարողացան արդարացնել իրենց վրա դրված հոգսերը:

Ես ճանաչում եմ հայրենադարձ շատ ուսանողների Պետական համալսարանում, բայց նրանցից մեկի հետ կապված է ինձ հոգով. մի դեպք, որ ուզում եմ պատմել այսեղ: Տարիներ առաջ, երբ ես եկել էի որպես Ամենայն Հայոց Հայրապետի պատվիրակ (1944 թվականին), իսկ այն ժամանակ գեղուուս չկար հայրենադարձի մասին, ինձ է մոտենամ մի ուսանող և առաջարկում է հոգատառը ստորագրելու: Ես, չփատեմ ի՞նչ դգացմունքով տարված, հետեւյալ տողերն եմ գրել այնտեղ. «Ես ինձ երջանիկ կրտայի, եթե Ձեզ հաջորդ անգամ հանդիպեի Երևանում, Պետական համալսարանում, և զուր որպես իմ ուսանողը մտտենայիք ինձ ու հարցնիք՝ «Պրոֆեսոր, ճանաշո՞մ եք ինձ, չէ՞ք ուղենա իմ հուշատերում վերհիշել Ձեզ Երկուողը»: Եվ ի՞նչ պատեհություն. այդ ուսանողը տարիներ հետո, իրոք, իր այս հուշատերը մեկնում է ինձ մեր Պետական համալսարանում... Դուք կարո՞ղ եք պատկերացնել, թե ինչ երջանկություն եմ ապրում ես այդ րոպեին:

Որպեսզի դուք պատկերացնեք մեր հայրենադարձ ուսանողության հաջողությունները գիտության ասպարեզում, ես միայն մի թիվ կարող եմ տալ. Գիտությունների ակադեմիայում ներկայումս սովորում 170 ասպիրանտներից 14-ը հայրենադարձներ են (ասպիրանտ է կոչվում այն մասնագետը, որ պատրաստվում է գիտական աշխատող դառնալու համար): Հստ որում այդ դիրքին նրանք հասել են իրենց ազնիվ աշխատանքով, իրենց բրտին-րով, իրենց համառությամբ, իրենց բրտին-րովի:

Հայագիտության ասպարեզում աշխատող մեր երիտասարդ հայրենադարձներից երեսի դուք ճանաչում եք Գասպար Գասպարյանին, որը մասնագիտությամբ փիլիսոփա է և լրագույն է նոր շրջանի փիլիսոփայության պատմությամբ՝ թիվ ունենալով, կարծեմ, «Գալուստ Կոստանդնուպոլիսի փիլիսոփայական

հայացքները»: Իր թեզը՝ նա գրել, պատրաստել է, քննվել է այն փիլիսոփայական սեկտորամ և ալմամ մնում է հրատարակել այն: Վերջինս ավարտական փայլում թեղ պաշտ-

պանեց և Պատմության ինստիտուտի գիտական աշխատանքի անցավ հայրենադարձ Հակոբ Փափազյանը, իրանից նա հրաշալի գիտի պարսկերները, իսկ այդ մեկ կարեռը է պարսկերները պարզունակությունները ուսումնասիրելու և հայոց պատմության մեջ օգտագործելու համար:

Պատմության նույն ինստիտուտում ասպիրանտ է հայրենադարձ Բարտիկյանը, որ եկել է Հունաստանից: Նա լավ գիտի հունարեն, որդին է «Հեղլեն դիք» աշխատության հեղինակին, հայրը աշխատում է Ակադեմիայի գրադարանում, կարծեմ օտար գրականության բաժնում, իսկ տղան, որ անցել է հորից, այժմ ասպիրանտ է և մասնագիտանում է հայ ժողովրդի պատմության մեջ, նրա ղեկավարն է ակադեմիկոս Հովսեփ Շոբելին: Բարտիկյանը երեք ամիսը մեկ անգամ զնում է կենինգտոնի, առաջազդությունները է սահմում իր զեկավարից և գալիս է Հայատան, աշխատում է պկրմազգյուղների վրա և կատարում տրված առաջազդությունները:

Հայագիտության ասպարեզում հայրենադարձ հայագետներից մասամբ ճանաչում եմ Ա. Տիրացյանին, Հակոբ Արամյանին, Առաքել Պատրիկին, Գևորգ Տերյանին, Տիրան Խմբոյանին, Հակոբ Թոյյանցին, Սյուզաններից երկու հոգու, և մի քանի ուրիշներ, որոնց անունը չեմ հիշուալ:

Մեզ, հայագետներին հատկապես ուգա-խացնում է այն իրողությունը, որ հայագիտությունն այժմ այն վիճակի մեջ չէ, ինչ անցրալում էր, և կամ ինչպես ներկայումս ձեզ մոտ է: Հայրենիքում հայագիտությամբ նրան նորություններով հետաքրքրում է ոչ միայն մեր գիտական աշխատուների ներշրջանակը, այլև մեր մատականական բազմահազար մասսան: Բավական է ասել, որ նոր լուս տեսած հայագիտական դրականությունը, եթե ժամանակին դուք չգննեք գրախանություններում, երկրորդ օրն իսկ շեք դանի այն: Եվ այդ հասկանալի է, եթե նկատի ունենաք մի երկիր, մի պետություն, որի բարձրագույն հաստատություններից տարեկան մի քանի հաջար շրջանավարտներ են մտնում կյանք:

Ես լավ գիտեմ մեր անցյալը, սիրելի հայրենագիցներ. և 25 տարի շարունակ թերթել եմ մեր մագաղաթյա ձեռագրերը և պետք է ասեմ, որ նրանց բոլոր էջերից լացի, ողբի ձայն եմ լսել Որպես Հայրենիքի բաղաքացի, որ ականատես է իր երկրի վիթխարի վերելքին, նրա ծաղկմանն ու բարգավաճմանը, չէի կարող անտարրեր լինել և չնկատել Հայ-

րենիքի հաջողությունները ուաման, աշխատանքի և գիտության բոլոր ասպարեզներում, այդ թվում և հայագիտության ասպարեզում; Իմ կարծիքով, եթե մենք ուզում ենք խոսել իսկական վերածնդի մասին, ապա այն չպիտի փնտրենք անցյալի մոռալ իրականության մեջ, այլ ներկայումս, հայ ժողովորդն այժմս է ապրում իր իսկական ոսկեղեն Վերածնուղք:

Ի տես այս ամենի, չեմ ուզում հավատալ, որ արտասահմանում կարող է գտնվել մի հայ մարդ, որ սրտով չուրախանա, երբ կարդում է թերթերում, որ մի հայ գիտնական, ելրեմնի թայաղետ զյուղացի՝ ակադեմիկոս Վիկորու Համբարձումյանը եկել է Լոնդոն՝ աստրոֆիզիկայից դասախոսություններ կար-

դալու անգիտական համալսարաններում: Չեմ ուզում հավատալ, որ արտասահմանում կարող է լինել մի հայ մարդ, որ սրտով խորթամբ լսի այն հաղորդումը, թե մի Սիմոնյան, մի հասարակ հայ մարդիկ, ֆուտրուլի դաշտում մրցման է գուրս եկել անգիտացիների գեմ և մի գնդակ ավելի է անցկացրել հակառակողի դարբասից: Որպես հայ մարդ չես կարող չհպարտանալ, երբ լսում ես, որ մի հայ երաժշտի՝ Արամ Խաչատրյանին ծափահարում է ամրող Լոնդոնը, ամրող Անգլիան:

Եվ մի թի այս ամենը ցայտոն, անընբիշ լի ապացույցներ չեն մեր աշքի լույս Հայրենիքի վերելքի ու բարգավաճման:

